ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

4 սեպտեմբերի 2026թ. թիվ 989

Ն.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ Ս.ԱՍՐՅԱՆԻՆ
ԱԼԱՎԵՐԴԻ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանի 2026 թվականի սեպտեմբերի 4-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետներ Նաիրա Համբարձումյանին և Սվետլանա Ասրյանին ս/թ սեպտեմբերի 4-ին մեկ օրով գործուղել քաղաք Ալավերդի՝ խնամատար ընտանիքներում հոգեզավակների խնամքի վերահսկողություն իրականացնելու համար:

2. Գործուղումն իրականացնել «Hyundai Tucson 2.0, 2012թ.» մակնիշի 496 CS 61 պետհամարանիշի ավտոմեքենայով:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետներ Նաիրա Համբարձումյանին և Սվետլանա Ասրյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

04/09/2026

X

ԱԻԴԱ ՇԻՐԻՆՅԱՆ

Signed by: SHIRINYAN AIDA 5301740180

Ա.ՇԻՐԻՆՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 4
ք.Վանաձոր